Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Մայրենի

Թեմա՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում»

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Դասվար՝ Լուսիկ Հովհաննիսյան

Ն.Գետաշեն 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Բովանդակություն----------2

2.Ներածություն----------3

3.Արժեք և արժեքային համակարգ----------4

4.Հայրենասիրությունը՝ բարձրագույն արժեք----------7

5.Արժեքային համակարգը ձևավորող գործոնները----------8

6.Արժեքային համակարգի ձևավորման և զարգացման մեթոդներ----------10

7.Արժեքային համակարգի ձևավորումը 'Մայրենիի՝ դասի շրջանակներում-13

8.Եզրակացություն----------15

9.Օգտագործված գրականության ցանկ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթական քաղաքականությունը տանում է նրան, որ կրթությունը հիմնվում է չորս կարևոր բաղադրիչների վրա՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում և արժեք: Այլ կերպ ասած՝ սովորողի արժեքային համակարգը զարգացնելը կրթական ոլորտի կարևոր առաջնահերթություններից է: Ես ինքս շատ եմ կարևորում սովորողների մեջ արժեքային համակարգի զարգացումը, որովհետև այդ գործունեության արդյունքում մարդու մեջ ձևավորվում են շատ կարևոր դրական գծեր, ապահովում ճիշտ ու կիրթ հարաբերակցումը այլ անձանց հետ, անձին օժտում դրական մտածողությամբ ու դրական վարքագծով: Բացի այդ՝ կախված մտավոր ունակություններից, սեփական ցանկությունից կամ այլ պատճառներից, գուցեև սովորողները չկարողանան ձեռք բերել բավարար գիտելիքներ ու հմտություններ, բայց զարգացած արժեքային համակարգով սովորողներին օժտելը շատ կարևոր է ու առաջնային:

Արժեքային համակարգի ձևավորումն ու զարգացումը պետք է ապահովել յուրաքանչյուր սովորողի մոտ՝ նախքան նրան՝ որպես շրջանավարտի, դպրոցից կյանք ուղարկելը:

Հարուստ արժեքային համակարգ ունեցող քաղաքացիները բարի են, մտածող, խոհեմ, հավասարակշռված, նրանք կովարար չեն լինում, հարգում են ուրիշներին, նրանց իրավունքները, ունենում են հարուստ ներաշխարհ, դառնում են լավ խորհրդատուներ ու հավատարիմ ու վստահելի ընկերներ, մի խոսքով՝ լինում են հետաքրքիր և օգնելու հարցում պատրաստակամ մարդիկ:

Իհարկե, ճիշտ քաղաքացի ձևավորելու համար միայն արժեքային համակարգի ձևավորումը քիչ է, բայց ես, կարևորելով հատկապես արժեքային համակարգի ձևավորումն ու զարգացումը, որոշեցի այս աշխատանքի շրջանակներում անդրադառնալ հենց դրան:

Ընդհանրապես արժեքային համակարգի ձևավորման հիմքը դրվում է դեռ կրտսեր դպրոցում հենց առաջին օրից: Արժեքային համակարգը սովորողների մոտ ձևավորվում է հենց միայն ուսուցչի դրական օրինակով: Բայց, բնականաբար, արժեքային համակարգի ձևավորման հետ կապված բավականին մեծ աշխատանք պետք է նախատեսվի և իրականացվի մանկավարժի կողմից: Ես ինքս, կարևորելով արժեքային համակարգի

զարգացումը, գտնում եմ, որ ուսուցիչը դասապլանով պետք է նախատեսի, թե արժեքային համակարգի զարգացման նպատակով ինչ պետք է արվի տվյալ օրվա դասի ընթացքում՝ կապված դասի թեմայի հետ:

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է՝ բացահայտել, թե ինչ է իրականում արժեքային համակարգը, ինչ բաղադրիչներ ունի, որոնք են առաջնահերթ արժեքները, ինչպիսի արժեքներ պետք է զարգացնել սովորողների մեջ՝ սկսած փոքր տարիքից և ընդհանրապես՝ որ արժեքները ինչ մեթոդներով է հնարավոր զարգացնել: Ես վաղուց եմ մտածում արժեհամակարգի զարգացման կարևորության մասին և իմ դասավանդած դասարաններում տարբեր տարիքերին կիրառել եմ տարբեր մեթոդներ ու հնարներ՝ կուտակելով բավականին մեծ փորձ: Ընթացքում իմ փորձից օրինակներ կներկայացնեմ: Ես ներկայումս ,աշխատելով իմ դասղեկական դասարանի հետ, լավ գիտեմ իմ յուրաքանչյուր աշակերտի արժեհամակարգը, շատ լավ նկատում եմ սովորողների արժեհամակարգում տեղի ունեցող դրական տեղաշարժերը, որոնք կատարվում են հիմնականում իմ կազմակերպած դասերի շնորհիվ /և ոչ միայն/:

Աշխատանքը կօգնի ավելի համակարգված տեսնել արժեքային համակարգի ու նրա ձևավորման ու զարգացման հետ կապված հարցերն ու դրանց լուծումները:

ԱՐԺԵՔ ԵՎ ԱՐԺԵՔԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Արժեքը, ինչպես հուշում է վիքիպեդիան, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքների և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Արժեհամակարգը կարելի է սահմանել նաև հետևյալ կերպ՝ դա մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: 'Արժեհամակարգ՝ հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից, որովհետև դժվար է կողմնորոշվել, թե թվարկած համախմբերից որին տալ գերապատվությունը: Բայց մի բան հաստատ է՝ արժեհամակարգի ձևավորման հարցում կարևոր դեր ունեն դպրոցական բոլոր առարկաները, իսկ առանձնապես մեծ է հումանիտար առարկաների դերը:

Ընդհանրապես մարդկային արժեքները կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝ հոգևոր և նյութական: Հոգևոր արժեքներից են՝ սեր, պատիվ, ազնվություն, համերաշխություն, հարգանք, հանդուրժողականություն: Նյութական արժեքներից են՝ ընտանիք, երեխաներ, տուն:



5. ՀԱՐԳԱՆՔ

6. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արժեքները կարող են լինել նաև ազգային և համամարդկային: Ազգային արժեքները այն արժեքներն են, որոնցով բնութագրվում է տվյալ ազգը և բնորոշվում որպես ժողովուրդ: Դրանք են՝ ավանդույթներ, մշակույթ, լեզու, կրոն , պետականություն: Հատկապես փոքր ազգերը պետք է կարողանան ամուր կառչել իրենց ազգային արժեքներից, որովհետև դրանք այն տարբերիչ հատկանիշներն են, որոնք մարդը կրում է՝ որպես տվյալ ժողովրդի ներկայացուցիչ:

Ազգային ավանդույթները՝ որպես արժեք, մեզանում շատ հարգված են և շատ ընդունելի հասարակության կողմից: բա մասին կարող է հոգ տանել նաև դպրոցը: Կարելի է կազմակերպել տարբեր միջոցառումներ, որոնց ընթացքում երեխաները անձամբ կներկայացնեն այդ սովորույթները կամ դրանք կցուցադրեն բեմականացման միջոցով:

Մշակույթը ևս շատ կարևոր ազգային արժեք է: Այստեղ պետք է հիշենք Տերյանի ՝Հոգևոր Հայաստան՝ հոդվածը: Գրեթե նույն կարծիքին է Տերյանը, որ ամեն ազգ պետք է ունենա իր հոգևոր արժեքները և պահպանի ու պաշտպանի դրանք, իսկ այն ազգը, որը չունի ինքնության առհավատչյաները՝ ազգային արժեքները,կարիք էլ չունի իր սահմանները պաշտպանելու: Ահա մի հատված նրա՝Հոգևոր Հայաստան՝ հոդվածից.՝Ես կարծում եմ, որ բացի արտաքին արգելքները հաղթահարելուց , ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ անդադար պիտի ստեղծի այն արժեքները, որոնք նրա ինքնության առհավատչյաներն են...Պիտի տենչանք ու աշխատենք հոգևոր Հայաստանի համար...Զկամենանք շքեղ շենքերի հայրենիք դարձնել մեր հայրենիքը, հոգու և մտքի՝ հպարտությամբ ճոխացնենք նրան...Այդ հոգևոր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատություն է պահանջում, անթիվ կյանքերի տոկուն հավատ և գիտակցություն. կլինի այդ հոգևոր Հայաստանը, ուրեմն և կլինի այն Հայաստանը, որի համար մեր ժողովուրդը թափում է այսօր իր արյունը՝: Տերյանի խոսքերից հետո այլևս անիմաստ է որևէ դատողություն ավելացնելը: Ստեղծվեց այդ հոգևոր հայրենիքը, մենք ունենք հսկայական մշակութային ժառանգություն,

հզոր արժեքներ , ու մեր՝ ուսուցիչներիս պարտականությունն է հոգ տանել, որ այդ մշակութային արժեքները ճիշտ ու անխաթար փոխանցվեն սերունդներին:

Չեմ կարող առանձին մի քանի բառով չանդրադառնալ այնպիսի արժեքին, ինչպիսին է մեր լեզուն: Մեզ համար դա ավելին է, քան պարզապես հաղորդակցության միջոց լինելը: Լեզուն հայ ժողովրդի կյանքում ունեցել է գոյաբանական նշանակություն: Պատահական չէ, որ բազմաթիվ բանաստեղծներ են իրենց սրտի խոսքը բանաստեղծություն դարձրած՝ ձոնել մայր լեզվին: Բերենք ընդամենը մեկ օրինակ Համո Սահյանի բանաստեղծությունից.՝Նա պիտի մեր առաջին ու վերջին սերը լինի, Ի՞նչ ունենք էլ աշխարհում, որ այսքան մերը լինի՝:

Կրոնը և պետականությունը ևս պետք է դասել անառարկելի ազգային արժեքների շարքին ու հիշել, որ գոյատևել են այն ազգերը, ովքեր կերտել են ուժեղ պետականություն ու սրբորեն պաշտպանել են այն, և կրոնն ու եկեղեցին օգնել ու աջակցել են պետականության գաղափարի պահպանմանը:

Համամարդկային արժեքները ևս որևէ մեկին անծանոթ չեն, դրանք այնպիսի արժեքներ են , որոնց տիրապետում են գրեթե բոլոր մարդիկ/հուսանք, որ այդպես է/:Համամարդկային արժեքներից են հավատը, սերը, արժանապատվությունը, արդարամտությունը, աշխատասիրությունը, խիղճը, բարեկամությունը, ընկերասիրությունը, բարությունը, վստահությունը, շփումը, պատիվը, ազնվությունը, ազատությունը, խաղաղասիրությունը, հարգանքը, պատասխանատվությունը, համերաշխությունը, հանդուրժողականությունը, կայունությունը, առողջությունը և այլն:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՐԺԵՔ

Բոլոր տեսակի արժեքներից կուզենայի առանձնացնել հայրենասիրությունը՝ որպես մեծագույնը բոլոր արժեքներից: Հայրենասիրությունը իր մեջ բազմաթիվ մեծ ու փոքր արժեքներ է պարունակում: Հայրենասիրության մեջ կարելի է տեսնել և՛ ծնողասիրությունը՝ որպես արժեք, և՛ սերը սեփական երկրի, նրա մշակույթի, լեզվի, սովորույթների, կրոնի նկատմամբ, սեփական անձի և ուրիշ անձանց նկատմամբ հարգանքը նույնպես ծնվում է հայրենասիրությունից, որովհետև ՝հայրենիք՝ ասվածը միայն հողը չէ,

սահմանները չեն, այլ այն ամենն է, ինչը գտնվում է այդ սահմաններից ներս, ինչի համար կռվել ու իրենց կյանքն ու արյունն են տվել հայերից շատերը: Այդ իսկ պատճառով հայրենասիրությունը հիմա մեզանում այլ արժեք ունի. լինել հայրենասեր՝ նշանակում է լինել մարդ՝ օժտված բոլոր տեսակի բարոյական հատկանիշներով, մարդ, ով հասկանում է, որ հայրենիքը ամեն պահի աջակցության կարիք ունի, որ հայրենիքից պահանջելուց առաջ նախ հարկավոր է հզորացնել հայրենիքը բոլոր տեսանկյուններից: Եվ ևս մի կարևոր դիտարկում հայրենասիրության վերաբերյալ՝ երեխաներին պետք է դաստիարակել այնպես, որ նրանք հասկանան ամենակարևոր ճշմարտությունը՝ հայրենասիրությունը չի ենթադրում անպայման կյանքը հանուն հայրենիքի զոհելը: Եվ միայն սահմանին չէ, որ մարդիկ իրենց հայրենասիրությունը ապացուցելու հնարավորություն ունեն:

Այնպիսի դժվար ժամանակաշրջանում ենք ապրում, որ շատերն են լքում երկիրը ու գնում այնտեղ, որտեղ ապրելը ավելի հեշտ է: Բնական է, որ ոչ բոլորն են կարողանում հայրենիքը գերադասել օտարության մեջ լավ ապրելու գայթակղությունից: Իսկ ինչու՞ ուսուցիչը չմտածի, որ հայրենասիրություն սերմանողը հենց ինքն է, և եթե մարդիկ հայրենասեր չեն, գուցեև դա հենց իր թերացման հետևանքն է: Լինել հայրենասեր՝ առաջին հերթին նշանակում է՝ չլքել հայրենիքը թեկուզև նրա ամենադժվար պահին, նշանակում է՝ անել հնարավորն ու անհնարինը՝ հայրենիքին ինչ-որ չափով գոնե օգտակար լինելու համար, լինել հայրենասեր՝ նշանակում է պետությունից կեղծ թղթեր սարքելու միջոցով դրամական օգնություն ՝չմուրալ՝, բանակից խուսափելու համար կեղծ հաշմանդամություն չսարքել, բուհում սովորելիս գերադասել գիտելիքը, այլ ոչ թե ամեն գնով ՝դիպլոմ՝ձեռք բերելու արատավոր երևույթը: Այլ խոսքով՝ լինել հայրենասեր՝ նշանակում է հարգել երկիրն ու նրա օրենքները:

Երեխաների մեջ դեռևս առաջին դասարանից պետք է սերմանել հայրենասիրություն: Իսկ այդ տարիքում հայրենասիրության դրսևորումները շատ ավել փոքր են, բայց շատ կարևոր, որովհետև առողջ ու ճիշտ հիմքի վրա պետք է կառուցել այն հզոր կառույցը, որը հետագայում դառնալու է նոր Վարդան Մամիկոնյան կամ Հովհաննես Բագրատյան կամ՝ Վազգեն Սարգսյան:

Հայրենասիրությունը սկսվում է իր դասարանը, դպրոցը, դպրոցի բակը սիրելուց, դրանք գնահատելուց, դրանց նկատմամբ խնամքից, որովհետև այն երեխան, որը այսօր չի սիրում իր դպրոցի բակը , չունի այն գիտակցումը, որ դա իրենն է , ու ինքը պետք է խնամի ու հոգ տանի դրա մասին, նա վաղը երբեք չի հասկանա, որ այս երկիրը իրենն է, հենց իրենը, ու ինքն է նրա ապագայի համար պատասխանատուն, ինքն է նրան պահպանողն ու պաշտպանողը:

Խոսքս ավարտեմ Հովհաննես Գրիգորյանի հայտնի բանաստեղծության տողով.Ես այս երգը երգում եմ սկզբից, որովհետև դու նա ես, որին կորցնելուց հետո էլ ոչինչ չենք ունենա կորցնելու...Ես այս երգը երգում եմ գլխաբաց, որովհետև դու նա ես, ում ձեռքը պետք է իջնի մեր գլխին օրհնության նման ,երբ մենք ճանապարհ ենք ընկնում, երբ մենք սկսում ենք օրը, երբ մենք ծնունդ ենք տալիս տողին ու մտքին՝:

ԱՐԺԵՔԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից առաջինը պետք է նշել ընտանիքը և սոցիալական միջավայրը: Երեխան առաջինը ծանոթանում է ընտանիքի անդամներին, հարգում ու ընդունում նրանց, ենթարկվում նրանց ազդեցությանը: Վաղ մանկության տպավորությունները, ընտանիքի վերաբերմունքը տարբեր արժեքների նկատմամբ նա կրելու է ամբողջ կյանքի ընթացքում, դա հենց հիմքն է, որի վրա պետք է կառուցվի ամբողջական արժեքային համակարգը: Եթե երեխան , դպրոց գալով, իր հետ չի բերում ընտանիքում արդեն իսկ ձևավորված արժեքային համակարգ, ապա հետագայում այդ տարբերների բացը պետք է լցնել մեծ հետևողականությամբ ու մեծ ջանքերի շնորհիվ: Սոցիալական միջավայրը ավելի ուշ է սկսում ազդել անձի արժեքային համակարգը զարգացնելու ուղղությամբ, բայց նրա դերը անժխտելի է: Պետք է հաշվի առնել մի շատ կարևոր փաստ՝ միջավայրում ընդունված են որոշակի վարքագծի սահմանումներ ու արժեքներ, որոնց տիրապետում է տվյալ միջավայրում ապրող անհատը գրեթե առանց գիտակցելու, առանց վերլուծելու, պարզապես ընդօրինակելով ուրիշին:

Արժեքային համակարգի ձևավորման համար կարևոր գործոն է նաև տարիքայինը: Երեխաների մոտ յուրաքանչյուր տարիքում առաջանում են որոշակի՝ տվյալ տարիքին բնորոշ հետաքրքրություններ, աշխարհը ճանաչելուն համընթաց նրանք ավելի շատ բան են իմանում, սովորում ավելի լավ վերլուծել իրերն ու երևույթները, ըստ տարիքի՝ փոխում են հետաքրքրությունների շրջանակը: Միջին տարիքում գուցեև շատ ծնողների դժվար կլինի երեխաների հետաքրքրությունները ճիշտ հասկանալը, գնահատելը, կախված տարիքից՝ նրանց ճիշտ ուղղորդելն ու նրանց մեջ ճիշտ արժեքներ սերմանելը: Այդ գործը իր վրա պետք է վերցնի դպրոցը: Իսկ դպրոցական ծրագիրը կազմված է այնպես, որ տարբեր արժեքների անդրադառնալու մեծ հնարավորություններ է տալիս: Որպես դասվար՝ ես կանդրադառնամ կրտսեր տարիքի սովորողների արժեհամակարգի ձևավորման հարցերին:

Արժեհամակարգի վրա ազդող կարևոր գործոններից պետք է համարել նաև միջանձնային հարաբերությունները: Երեխաների վրա մեծ ազդեցություն կարող են գործել այս կամ այն անհատը, ում երեխաները սովորաբար ընտրում են որպես 'էտալոն' և ձգտում ամեն ինչում նմանվել նրան: Այստեղ ևս պետք է ուշադիր լինել երեխաների նկատմամբ, որպեսզի նրանց 'հերոսը', ում ցանկանում են նմանվել վարքագծով ու արժեքային համակարգով, լինի դրական կերպար, որովհետև երեխաները հաճախ կարող են նաև բացասական վարքագիծ ու կասկածելի արժեքային համակարգ ունեցող մարդու նմանվելու ցանկություն ունենալ:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Ուսուցչի կազմած օրվա դասապլանում դասի նպատակներից մեկը պետք է լինի արժեքային համակարգի զարգացումը: Յուրաքանչյուր դասի նպատակները ձևակերպելիս պետք է նշվի, թե ինչ է նախատեսվում այդ օրվա դասի համար՝ սովորողների արժեքային համակարգը զարգացնելու նպատակով:

Արժեքային համակարգը հնարավոր է ձևավորել ու զարգացնել տարբեր մեթոդներով ու եղանակներով: Շատ հաճախ ուսուցիչը ընտրում է մեթոդը՝ առանց մտածելու, որ այն տարբեր խնդիրներ է լուծում, բայց ցանկալի կլիներ, որ առանձնահատուկ ուշադրություն հրավիրվեր այն հանգամանքին, որ տվյալ մեթոդի

կիրառումը, ի թիվս այլ նպատակների իրականացման , իր դրական ազդեցությունն է գործում նաև աշակերտների արժեքային համակարգի վրա և նրանց մոտ ձևավորում կամ զարգացնում է այս կամ այն արժեքը:

Ստորև կանդրադառնանք մի քանի մեթոդների, որոնց կիրառումը նպատակահարմար է դասերի ընթացքում սովորողների արժեհամակարգը ձևավորելու ու զարգացնելու տեսանկյունից:



1.Փոխներգործուն մեթոդներ/խմբային աշխատանքի մեթոդներ/- Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ երեխաները շատ են սիրում տարբեր տեսակի խաղ- մրցույթներ: Բացի այդ՝ նրանց շատ է ոգևորում թիմային աշխատանքը: Թիմում աշխատելու ընթացքում նրանք հնարավորություն ունեն ինքնադրսևորվել, ցուցաբերել իրենց հատկանիշները, եթե անհատը կարող է ներկայացնել իր աշխատանքը ու քննադատվել, չընդունվել ընկերների կողմից, ապա թիմում, որտեղ յուրաքանչյուրի

աշխատանքը կարող է որևէ առումով որևէ օգուտ բերել, երեխաները շատ արագ կողմնորոշվում են, թե տվյալ ընկերոջ որ հատկությունն է իրենց պետք գալու, շատ արագ միմյանց բացատրում են, թե ինչ է պետք անել, այլ կերպ ասած՝ նրանք գործի են դնում միմյանց, յուրաքանչյուրի համար գտնում են որևէ պիտանի ու պատասխանատու աշխատանք: Արդյունքում՝ հիմնական առաջադրանքը կատարվում է, իսկ դրա հետ միասին անփորձ աչքի համար անհկատելի, բայց բազմափորձ ուսուցչի համար՝ տեսանելի , տեղի է ունենում սովորողների արժեքային համակարգի զարգացում: Աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ ու դրանց տալ մտածված ու կիրթ պատասխաններ, ընդօրինակել միմյանց դրական վարքագիծը: Հասակակիցների հետ աշխատելիս սովորողները ավելի ազատ են կարծիքներ փոխանակելիս, նրանք չեն վախենում, որ մեծը կուղղի իրենց, միաժամանակ նրանք սկսում են միմյանց նկատմամբ դրսևորել հարգանք, վստահություն, ձեռք են բերում համախոհներ՝ ընկերներ, ովքեր մտածում են գրեթե իրենց նման, հետևաբար գաղափարակիցներ են: Թվարկեցինք արժեքների բավականին մեծ համախումբ, որն աշակերտները ձեռք են բերում խմբային աշխատանքների կատարման ընթացքում կամ, ինչպես ընդունված է ասել, համագործակցային մեթոդով աշխատելիս:

2.Կարճ զրույցի մեթոդ-Շատ հմուտ ու բազմափորձ ուսուցիչներ հաջողությամբ կիրառում են այս մեթոդը դեռևս խորհրդային դպրոցի տարիներից սկսած: Զրույցը նոր նյութի մատուցումն է, բայց ոչ թե բառացիորեն ուսուցչի կողմից հաղորդվում է դասագրքային նյութը, այլ ուսուցիչը մասնակից է անում սովորողներին: Ովքեր այս մեթոդին չեն տիրապետում և որոշել են առաջին անգամ անցկացնել, կլինի արհեստական ու շինծու, բայց ուսուցիչը, ով մտերիմ է իր աշակերտների հետ, ում արդեն հաստատել են սիրել ու վստահել աշակերտները , ում խոսքին սպասում են հետաքրքրությամբ, առանձնապես ջանքեր չի գործադրելու՝ զրույցի մեթոդով դասանյութը աշակերտներին փոխանցելու համար: Այս մեթոդի դեպքում ուսուցիչը դասը սկսում է անկաշկանդ, կյանքից, դպրոցի առօրյայից փոքրիկ կենցաղային

օրինակ բերելով՝հարցնում է աշակերտների կարծիքը.՛Օրինակ դուք ինչպե՞ս կվարվեիք,եթե...՝: Այստեղ նա ներկայացնում է որևէ կոնֆլիկտային իրավիճակ, որի նման մի իրավիճակում հայտնվել են նոր դասի հերոսները: Սովորողները, բնականաբար, կտան մի շարք պատասխաններ, կփորձեն գնահատել իրավիճակը, լուծումներ առաջարկել, որից հետո ուսուցիչը կանցնի զրույցի հաջորդ հատվածին.՛Իսկ գիտե՞ք, թե ինչպես վարվեցին մեր հերոսները , ովքեր հայտնվել էին նման իրավիճակում՝: Նա կարճ կներկայացնի դասը, այնուհետև հարցերի միջոցով կծավալի քննարկում, աշակերտներին կմղի սեփական դիրքորոշումների կառուցման և արտահայտման: Ընթացքում ուղղվում են սխալ կարծիքները, ծավալվում է իսկապես անկեղծ զրույց, որտեղ ուսուցիչը, ստեղծելով անկաշկանդ մթնոլորտ, դուրս է ՛կորզում՝ երեխաներից բոլոր տեսակի դրական ու բացասական կարծիքները, սխալ ձևավորված մտքերն ու կարծիքները ուղղվում են ուսուցչի ու համադասարանցիների կողմից, ու բոլորը միասին կատարում են ճիշտ եզրակացություն՝ինչ սովորեցին այսօրվա դասից: Իսկ դասը անպայման լինելու է արժեհամակարգի զարգացմանը միտված, որովհետև դպրոցական ծրագիրն ու դասագրքերը հենց այդ նպատակով էլ կազմվել են:

3.Բանավեճի մեթոդ-Ճիշտ կազմակերպելու դեպքում այս մեթոդը շատ արդյունավետ ու շատ հետաքրքիր մեթոդ է: Մեթոդի էությունը կայանում է նրանում , որ ընտրվում է որևէ թեմա, որը նախապես բավականին ծանոթ է սովորողներին, որպեսզի նրանք սեփական կարծիքները ունենան քննարկվող հարցերի վերաբերյալ: Այնուհետև դասարանը բաժանվում է երկու խմբի այնպես, որ խմբերի անդամները ունենան միմյանց հակառակ կարծիքներ, որպեսզի կարողանան բանավիճել: Այնուհետև գրատախտակի վրա գրվում են թեմայի շուրջ առանցքային հարցերը, սովորողները հարցերի շուրջ արտահայտում են կարծիքներ ու ընդդիմախոսում են միմյանց: Բանավեճի վերջում պետք է ծնվի ճշմարտությունը: Այսինքն՝ հնարավոր է, որ մի խումբը կամ խմբի առանձին անդամներ փոխում են իրենց համոզմունքները և միանում հակառակ խմբին, կամ ուսուցիչը ՛հաշտության՝ եզրեր է ստեղծում՝ ասելով, որ մի կողմը ճիշտ է այս կտրվածքով, մյուս կողմը՝ այն կտրվածքով: Եթե ուսուցիչը

դասապլանում՝ նպատակների մեջ, նախատեսել էր, թե որ արժեքն է զարգացնելու սովորողների մոտ բանավեճի ընթացքում, ապա վերջում իր համար կարող է փաստել, թե որքանով իրականացվեց իր այդ նպատակը:

4.Դասախոսության մեթոդ-Այս մեթոդը պատկանում է ուսումնառության ոչ ակտիվ մեթոդների թվին: Դասարանում դասախոսությունները չպետք է լինեն շատ ծավալուն: Սովորաբար երեխաները դժվարանում են երկար բանավոր խոսք լսել, 15 րոպե անց նրանք այլևս չեն լսում, նրանց ուշադրությունը նվազում է նույնիսկ այն դեպքում, երբ թվում է, որ ուշադիր լսում են ու չեն շեղվում: Այդ պատճառով չպետք է շատ երկար դասախոսություն կարդալ, բայց փոխարենը կարելի է կազմակերպել կարճ դասախոսություններ, որոնք ավելի շուտ արժեքային համակարգը զարգացնելու համար են,քան տեղեկատվություն հաղորդելու: Արժեհամակարգի զարգացմանը միտված դասախոսություններ կարելի է կարդալ հանպատրաստից, երբ դասարանում որևէ անակնկալ խնդիր կամ վեճ է ծագել: Այդ դեպքում չպետք է ափսոսալ ժամանակը, այդ ժամանակից վերցված մի փոքր հատված կարելի է նվիրել կյանքից վերցված օրինակներով համեմված դասախոսության, որի նպատակն է երեխաների մեջ սերմանել որևէ կարևոր բարոյական արժեք:

ԱՐԺԵՔԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՝ՄԱՑՐԵՆԻԻ՝ ԴԱՍԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Նոր չափորոշիչը նշում է, որ արդի դարաշրջանում երկչափ կրթությունից անցում է կատարվել եռաչափ կրթության:

ԳԻՏԵԼԻՔ ⟶ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ /ՀՄՏՈՒԹՅՈՒՆ/

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ⟶ ԳԻՏԵԼԻՔ ⟶ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ /ՀՄՏՈՒԹՅՈՒՆ/

Այդ է պատճառը, որ մայրենիի վերջնարդյունքները սահմանվել են ըստ հիմնական հասկացությունների: Նոր չափորոշիչը սահմանում է հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) հաղորդակցում
2) ընթերցանություն
3) լեզվական համակարգ
4) ստեղծարարություն
5) ինքնություն

Արժեհամակարգի զարգացման համար հիմք է հանդիսանում 'ինքնություն' հասկացությունը՝ իր 'վերաբերմունք և վարքագիծ' և 'արժևորում' ենթահասկացություններով: Երկրորդ դասարանում, ըստ չափորոշչի պահանջի, սովորողների մոտ պետք է զարգացնել ընկերների հետ համագործակցելու, խմբային աշխատանքներին մասնակցելու, տարբեր դերեր ստանձնելու և դրանք հաջողությամբ իրականացնելու հատկանիշները: Երեխային, ըստ չափորոշչի պահանջի, պետք է սովորեցնել՝

1) սիրել իրեն, իր ընտանիքը, հայրենիքը
2) դրսևորել հարգանք ուսուցիչների, դասընկերների, իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ
3) դրսևորել հարգանք դպրոցի, գրքի, շրջապատի նկատմամբ
4) ցուցաբերել հոգատարություն սեփական անձի,շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ
5) սիրել ընթերցանությունը

Երկրորդ դասարանում արժեքային համակարգի ձևավորումը ներկայացնում եմ իմ ընտրած 'Ժողովուրդն իմաստուն է', 'Իմ դպրոցը և գրքերի կախարդական աշխարհը', և 'Մեր խաղաղ տունն ու ընտանիքը' թեմատիկ բաժիններով: Աղյուսակով կներկայացնեմ, թե ըստ չափորոշչի՝ արժեքային համակարգը զարգացնելու համար ինչպիսի նպատակներ ու վերջնարդյունքներ պետք է սահմանել այս թեմատիկ

բաժինները անցնելու ընթացքում: Դասի հետ կապված այլ նպատակներն ու վերջնարդյունքները, բացի արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման հետ կապվածներից,այստեղ չեն նշվելու:

ԹԵՄԱ	՛Ժողովուրդն իմաստուն է՛
ԵՆԹԱԹԵՄԱՆԵՐ	՛Երեք աղջիկների հեքիաթը՛ ՛Տաղիկ-խաղիկ՛ ՛Առած,ասացվածք՛ ՛Օրհնանք-մաղթանք՛
ՆՊԱՏԱԿ	Հոգեկան գործընթացների զարգացում, ինքնակազմակերպման հմտություն և կամային որակների զարգացում, հաղորդակցական և համագործակցային կարողությունների ամրակայում:
ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ	Սիրի իր հայրենիքը, դրսևորի հարգանք դպրոցի, գրքի նկատմամբ, ցուցաբերի հոգատարություն շրջակա միջավայրի նկատմամբ:
ԹԵՄԱ	՛Իմ դպրոցը և գրքերի կախարդական աշխարհը՛
ԵՆԹԱԹԵՄԱՆԵՐ	՛Իմ այս գիրքը՛ ՛Գիրք՛ ՛Արջն ու գիրքը՛ ՛Քիչ ենք, բայց ձայնավորներ ենք՛
ՆՊԱՏԱԿ	Հոգեկան գործընթացների զարգացում,

	ինքնակազմակերպման հմտություն և կամային որակների զարգացում, հաղորդակցական և համագործակցային կարողությունների ամրակայում:
ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ	Դրսևորի հարգանք գրքի, ուսուցիչների նկատմամբ, սիրի ընթերցանությունը:
ԹԵՄԱ	'Մեր խաղաղ տունն ու ընտանիքը՝
ԵՆԹԱԹԵՄԱՆԵՐ	'Մայրիկի ծաղիկը՝ 'Զարմանալի են մայրիկները՝ 'Ծեր պապն ու թոռը՝
ՆՊԱՏԱԿ	Հոգեկան գործընթացների զարգացում, ինքնակազմակերպման հմտություն և կամային որակների զարգացում, հաղորդակցական և համագործակցային կարողությունների ամրակայում:
ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ	Սիրի իրեն, իր ընտանիքը, ցուցաբերի հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտելով հետազոտական աշխատանքս՝ ամփոփեմ արդյունքները: Ընտրված էր, ըստ իս, հետաքրքիր ու առանցքային թեմա: Ես ինքս, ունենալով ամենօրյա շփումներ երեխաների հետ, շատ հաճախ նկատում եմ, որ շատերի արժեհամակարգը իրենց տարիքի համեմատ շատ աղքատ է. հավանաբար ծնողները շատ հաճախ, զբաղված լինելով առօրյա հոգսերով, դա չեն նկատում կամ չեն կարևորում, կամ չունեն այն իմացության մակարդակը, որ աշխատեն այդ ուղղությամբ, իսկ դպրոցը այդ առումով ունի հստակ ու հսկայական անելիք: Գիտակցելով դա՝ ես որոշեցի հենց այս խնդրի վերաբերյալ ուսումնասիրություն անցկացնել, դա հնարավորություն տվեց ինձ մեկ անգամ ևս համակարգված կերպով անդրադարձ կատարել խնդրին, որոնել այդ խնդրի լուծման ճանապարհներ: Նախ ուսումնասիրել եմ արժեքները, դրանց տեսակները, անդրադարձել եմ տարբեր արժեքներին՝ կարևորելով դրանցից հատկապես հայրենասիրությունը՝ որպես բարձրագույն արժեք, այնուհետև անդրադարձել եմ այն հարցին, թե որոնք են արժեքային համակարգը ձևավորող գործոնները, և առանձնացրել եմ հատկապես դրանցից ընտանիքը, սոցիալական միջավայրը, տարիքային գործոնը և միջանձնային հարաբերությունները/որոշակի անհատների ազդեցության գործոնը երեխայի արժեհամակարգի ձևավորման վրա/:

Այնուհետև անդրադարձել եմ այն մեթոդներին, որոնք օգնում են ձևավորել ու զարգացնել սովորողների արժեքային համակարգը: Հատկապես առանձնացրել եմ խմբային աշխատանքի մեթոդը, գրույցի, բանավեճի, դասախոսության մեթոդները:

Նոր չափորոշչում հստակ սահմանված է, թե ըստ դասարանների ինչպիսի նպատակներ պետք է դնի ու ինչպիսի վերջնարդյունքների պետք է հասնի ուսուցիչը նաև արժեհամակարգի ձևավորման ու զարգացման հարցում, ես աղյուսակով ներկայացրել եմ, թե որ թեմայի ուսումնասիրության ընթացքում ինչ նպատակ պետք է դնել և ինչ վերջնարդյունք պետք է ակնկալել: Իհարկե, հիմք եմ ընդունել նոր չափորոշիչը:

Աշխատանքի ավարտին հարկ է ևս մեկ անգամ նշել՝ մեզ պետք են հարուստ արժեքային համակարգ ունեցող քաղաքացիներ, դպրոցը պարտավոր է ամեն վայրկյան հիշել դա ու ամեն ջանք կենտրոնացնել այդ ուղղությամբ, որովհետև այսօր մենք կերտում ենք մեր ապագան, մեր վաղվա օրը, իսկ վաղվա օրվա պայծառ լինելու երաշխիքը այսօրվա շրջանավարտներն են, ովքեր պետք է գիտելիքների ու հմտությունների հետ միասին ունենան նաև սեփական ճիշտ դիրքորոշում և հարուստ արժեքային համակարգ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Իննա Փարեմուզյան.՝Սովորողների արժեհամակարգի ձևավորում հանրակրթական ուսումնական հաստատությունում՝

2.Արմինե Գրիգորյան .՝Ազգային արժեքային համակարգի ձևավորումը՝

3.Վահան Տերյան.՝Հոգևոր Հայաստան՝-1914 թ.

4. Նանե Զեյնալյան. «Անձի արժեհամակարգի և կյանքի նպատակների փոխպայմանավորվածությունը հոգեբանական պատերազմի պայմաններում»

5. Հանրակրթության պետական չափորոշիչ-ընդունման ամսաթիվը՝ 04.02.2021,ընդունող մարմինը՝ ՀՀ կառավարություն,ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 10.02.2021

ԴԱՍԱՊԼԱՆ

Ուսուցիչ՝ Լուսիկ Հովհաննիսյան

Առարկա՝	Մայրենի	01.12.2022 թ.		Կիսամյակ	1-ին	Դասարան	2-րդ
Թեմա՝	՛Մեր խաղաղ տունն ու ընտանիքը՝ թեմայի մուտք						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, քարտեր, նկարներ, պաստառ, որում երևում են գործողություն ցույց տվող բառերը:						
Դասի նպատակը՝	❖ Գործողություն ցույց տվող բառերը տարբերելու կարողության ձևավորում ❖ Անձ և իր ցույց տվող բառերը ճանաչելու կարողության ամրակայում ❖ Հատկանիշ ցույց տվող բառերը ճանաչելու կարողության ձևավորում ❖ Պատմվածքները վերարտադրելու կարողության ձևավորում						
Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	❖ Տարբերել գործողություն ցույց տվող բառերը ❖ Առանձնացնել անձ և իր ցույց տվող բառերը ❖ Ճանաչել հատկանիշ ցույց տվող բառերը ❖ Պատմել՝ պահպանելով դեպքերի հաջորդականությունը						
Գործողություններ՝/ժամանակ, տևողություն/45ր	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ			

Դասի սկիզբ-7ր Նոր նյութի մատուցում-10ր Ուղղորդված աշխատանք-20ր Ինքնուրույն աշխատանք-5ր Դասի ավարտ-3ր	Նախորդ դասի ամփոփում, խմբավորել պարզ, բարդ և ածանցավոր բառերը Պրիզմայի մեթոդը՝ ՛ընտանիք՝ բառով: Կազմել նախադասություններ *հայրիկ, մայրիկ,ջ երմություն, հոգատար* բառերով, թեմատիկ նկարից դուրս գրել այն բառերը, որոնք պատասխանում են ի՞նչ է անում, ի՞նչ է լինում հարցերին:	Պատմել թեմատիկ նկարը, նկարագրել, թե ինչպես են ապրում խաղաղ ընտանիքում: Վերահսկել և ուղղորդել աշակերտների աշխատանքը:	Ո՞վ է ընտանիքում ամենահոգատարը, ո՞վ է ամենաաշխատասերը, ի՞նչ դեր ունի ընտանիքը մարդու կրթության և դաստիարակության գործում:	Պրիզմա, նկարի քննարկում
Տնային աշխատանք՝ 3ր	Տնային առաջադրանքի հանձնարարում-՛Իմ խաղաղ ընտանիքը՝ շարադրություն:			

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝

……

ԴԱՍԱՊԼԱՆ

Ուսուցիչ՝ Լուսիկ Հովհաննիսյան

Առարկա՝	Մայրենի	05.09.2022 թ.		Կիսամյակ	1-ին	Դասարան	2-րդ
Թեմա՝	՛Գիրք՛						
Օգտագործվող նյութեր՝	Գիրք, տետր, հեքիաթների ժողովածու, ՛Այբբենարան՛, ՛Աստվածաշունչ՛, պատկերազարդ այլ գրքեր, գունավոր թուղթ, մկրատ:						
Դասի նպատակը՝	❖ Արտահայտիչ ընթերցանություն ❖ Սովորեցնել գրքի հետ վարվել խնամքով ❖ Չափածո գրական ստեղծագործությունները անգիր արտասանելու կարողության ձևավորում ❖ Ածական + գոյական բառակապակցություններ կազմելու կարողության ձևավորում						
Ուսուցման արդյունքները,որոնք կվաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	Սովորողները պետք է կարողանան ❖ Արտահայտիչ ընթերցել, կարդացածը վերարտադրել ❖ Կոնկրետ գրքի օրինակով ցույց տալ գրքերի կարևորությունը ❖ Անգիր արտասանել չափածո գրական ստեղծագործությունները ❖ Առարկա ցույց տվող բառին վերագրել հատկանիշ ցույց տվող բառ						
Գործողություններ՝/ժամանակ, տևողություն/	Ուսումնական գործունեություն աշակերտներ	Ուսումնական գործունեություն	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ			

		ուսուցիչ		
Դասի սկիզբ-7ր Նոր նյութի մատուցում-10ր Ուղղորդված աշխատանք-20ր Ինքնուրույն աշխատանք-5ր Դասի ավարտ-3ր	Պատասխանել հարցերին, 'Մտագրոհ'' 'գիրք' բառով, դասագրքից կատարել առաջադրանք 5-րդ-ը, լրացնել բաց թողնված տառերը, բանաստեղծությունից արտագրել ե-ով սկսվող բառերը: Դասի ավարտին հանձնարարել գրել 3 լոպեանոց շարադրանք՝ 'Գիրքը՝ ինձ ուղեկից՝ վերնագրով:	Կազմակերպչական մասում հարցերով վերհանել նախորդ դասից ստացած գիտելիքները, կարդալ նոր դասը, կատարել բացատրական աշխատանք, հանձնարարել պատրաստել փոքրիկ գրքեր, մեջը գրել հանելուկներ և վերջում նվիրել միմյանց:	❖ Ի՞նչ է գիրքը ❖ Ո՞րն է քո կարդացած առաջին գիրքը ❖ Ի՞նչ կլիներ, եթե գրքեր չլինեին	Մտագրոհ,համագործակցային մեթոդ,հինգ լոպեանոց շարադրանք

Տնային աշխատանք՝ 3բ	Տնային առաջադրանքի հանձնարարում-Դասագիրք, էջ 7, վարժություն 2:

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝

……

ԴԱՍԱՊԼԱՆ

Ուսուցիչ՝ Լուսիկ Հովհաննիսյան

Առարկա՝	Մայրենի	17.11.2022 թ.		Կիսամյակ	1-ին	Դասարան	2-րդ
Թեմա՝	՛Ժողովուրդն իմաստուն է՛ թեմատիկ բաժնի ամփոփում						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, քարտեր,ն կարներ, հանելուկների և հեքիաթների ժողովածու						
Դասի նպատակը՝	❖ Առարկա ցույց տվող բառերը ճանաչելու կարողության ձևավորում ❖ Անձ և իր ցույց տվող բառերը ճանաչելու կարողության ձևավորում ❖ Տեքստը բարձրաձայն կարդալու կարողության զարգացում ❖ Ժողովրդական բանահյուսության նմուշները՝ հեքիաթ, հանելուկ, ասացվածք, տարբերակելու կարողության ձևավորում						
Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	Սովորողները պետք է կարողանան ❖ Ճանաչել առարկա ցույց տվող բառերը ❖ Տարբերել իր ցույց տվող բառերը						

	❖ Ընթերցել տեքստը ❖ Տարբերակել ժողովրդական բանահյուսության նմուշները			
Գործողություններ՝/ժամանակ,տևողություն/	Ուսումնական գործունեություն աշակերտներ	Ուսումնական գործունեությունն ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Դասի սկիզբ/ 7ր/ Նոր նյութի մատուցում /10ր/ Ուղղորդված աշխատանք /20ր/ Ինքնուրույն աշխատանք /5ր/ Դասի ավարտ /3ր/	Պատասխանել հարցերին: Բնութագրել գյուղացուն, աղջիկներին և նագիրին, հեքիաթից արտագրել անձ և իր ցույց տվող բառերը, որոշել, թե էջ 45-ի առաջադրանքներից որն ինչ է, պատրաստել պաստառ	Ուղղորդված հարցերով վեր հանել այս թեմատիկ բաժնից ստացած գիտելիքները: Հանձնարարել 'խանդված' առածների մասերը իրար միացնել, հանձնարարել անվանել նկարները,տա	❖ Ո՞րն էր հեքիաթում բարին: ❖ Ո՞րն էր չարը: ❖ Ո՞վ է հաղթում հեքիաթում: ❖ Ինչու՞ է այս թեմատիկ բաժինը կոչվում՝Ժող ովուրդն իմաստուն է':	

	ժողովրդական բանահյուսության մեր սովորած նմուշներով:	և համապատասխան հարցը:	❖ Ի՞նչ վերնագիր կընտրեիք դուք: ❖	
Տնային աշխատանք՝ 3ր	Տնային առաջադրանքի հանձնարարում-Դասագիրք,էջ 46,վարժություն 5:			

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝

……